



44 (228). ԲԼԲՈՒԼ ՈՒ ՔՈՒ ԲՈՒՆ

Աճմու թագավորի բլբուլի ձենից մարդ ու քար մայիլ կը մնեն։
Թագավորն ըդրան շա՛տ կը սիրեր, կուտ կիտեր, շուր կիտեր, կը
պահեր-շահեր։

Օր մե, նեճրի վախտ, վազիր քոռ բու մե կը բռնե, բերե կիտա
թագավորին, կը զնին բլբուլի կուշտ։ Բլբուլն օր զձեն կը քցե,
ըդրա պատռել դիկա, ինք լե ձեն կը քցե, զթագավոր կը հանե
քնուց։

— էդ ո՞ն էր իմ քուն խանգարեց։

— Թագավոր ապրած, քոռ բուն։

— Զըդրա ձեն կտրեք։

Զձեն կը կտրին, քոռ բու, դու քոռ բու, կը դառնա բլբուլին կրսե.

— Ես քրզնե պակա՞ս ձեն ունիմ, յորի՞ն կտրեցին զիմ ձեն։

— Է՛,— կըսե բլբուլ,— դրո Ադամու օրեն չէղեր ՚քու պես մեկն,
օր կոներ ուր խաղով զմարդ մայիլ էնեք, էդ խզար օր հասկընեք՝
քոռ բու չըր էղնի։

